

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 փր.
Վեցամսեայ 6 փր.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

(2 քիւ մեյ ծրարով)
Տարեկան 14 փր.
Վեցամսեայ 7 փր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

— 0 —

Մանուցման տղր
20 ամսեայ



ԻՐԱՎԱԿԱՆ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Ipravounk“

V A R N A (Bulgarie)

— 0 —

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Դրոսիւնիս ես
չեմ տրոսիւնիս

ՈՐԲԸ ԵԿԵՂԵՑԻԵՆ ԱՐՏԱՔՍՈՒԱԾ

Այս վերադարձինք մեր ըն-
թերցողներուն շատ տարօրինակ և
նոյնիսկ անհասկացալի պիտի թուի
անշուշտ. բայց դժբաղդարար
տիրուր և թարմ գէպք մըն է որ
տեղի ունեցաւ Չատիկի օրը տեղ
այս եկեղեցւոյ մէջ. Ահա այս
թիւով հրատարակուող Որբա-
խնամի նամակն ալ կուգայ հետեւ.
Եւ շատ փափուկ տողերով հաս-
տատուի թէ՛ հայ որքո՞նք հայ եկեղե-
ցիկն արտաքսուած է.

«Որբախնամի Գործ. Ժողովը Չատ-
կի առաւում ուղղելով եկեղեցւոյ մէջ
պնակ մ'ալ որբերու անուան շրջագա-
յիւ, հազիւ յաջողեցաւ, սակայն իր
կամիքն ընդունելու անկախ պատճառաւ
միայն եկեղեցւոյ շրջապակե զոյրս
(այսինքն փողոցը) անկիւն մը գտնել
ու հոն դեռեղել զորսէն խնդրուած
սեղանի մը վրայ ափսէ մը» ևւն:

Տեղւոյս թաղ. խորհուրդը՝ որ
ամեն կիրակի և տօն օրեր 10-12
պնակներ յաջորդաբար կը շրջագա-
յեցնէ եկեղեցւոյ մէջ, չէ թոյլա-
տրած պնակ մըն ալ որբերուն յատ-
կացնել, տարին մէկ անգամ, գո-
նէ. և Որբախնամը «չըլլար
մեր շահուն մը դպչի» բերտ ու
անողոք պատասխան մը առնելով,
հարկադրուած է, յաւաքիկ ազ-
բաններէն ալ աւելի հեռուն, փո-
ղոյին դռնէն ալ դուրս, սեղանի
մը վրայ ափսէ մը դնել, (սեղանը
ու ափսէն ալ սրճարանէ մը բերել
ստիպուելով):

Ահա այս է այն տխուր դէպքի
կարճ պատմութիւնը, որուն հերո-
սը կը ներկայանայ Աղգ. Հիւան-
դանցին մէջ սնած ու մեծցած
վաղեմի որբ մը, անսիրտ վաշխա
ուռ մը, որ իր պաշտօնակիցնե-
րուն թոյլ ու ամեն բանի յարմա-
րող բնաւորութենէն օգտուելով,
իր եւր, անձնական առեւտրութիւնը
առաջ կը քշէ ի վնաս որբին և Որ-
բախնամին. Մենք կը սիրենք հա-
ւատալ թէ թաղ. խորհրդոյ ան-
դամներէ մէկ քանին հիմէ ներկայ
գտնուէին, այդչափ բիրտ ու անո-
ղոք կերպով որբին պնակը եկեղե-
ցիէն արտաքսելու համակարծիք

չպիտի լինէին. բայց կրկին ասանք
ալ չեն կրնար արգարանալ քանի
որ իրենց բոլոր իրաւասութիւնը
կամովին յանձնած են այնպիսի մէ-
կու մը (կամ երկուքի) որ իր նախ-
ու քմահաճոյքէն զատ ոչինչ չի
ճանչնար:

Քրիստոնէութեան այս մեծ տօ-
նին էն քարտիրտ օտարականները
հայ որբին փոքր իշատէ օգնու-
թիւն մ'ընելու երբ արամադրու-
թիւն ցոյց կուտան, ասդին որբին
պնակէն անանող վաղեմի որբ մը
եւ կը մղէ հայ որբին դողդոջուն
ձեռքը իր հայրենակիցներու առջի-
ւէն, որպէսզի ասանք 5 ամսեայ
չ դնեն անոր կմախոցած ափին մէջ:

Ամենէ աւելի վարենի ճանչ-
ցուած Ժողովուրդները իսկ իրենց
տօնական օրերուն մէջ կը յիշեն
որբը, մերկը ու աղքատը եւ անոնց
նուէր մը, օգնութիւն մը կը փու-
թացնեն. Մեզ բնաշինչ ընող վա-
րագ թուրք կառավարութիւնը ան-
գամ չէ մտածած որբախնամ գոր-
ծին՝ որ զուտ մարդասիրական է,
արգելք յարուցանել. բայց ազատ
երկրի մը մէջ այս անօրինակ վար-
մունքը կունենայ ազգային պաշտօ-
նեայ մը, որ Ժողովուրդէն ընտ-
րուած ըլլալուն հակառակ անոր
նուիրական զգացումներուն հետ
կը խաղայ ու կարգիլէ հայ որբին
եկեղեցւոյ շրջապակէն ներս ոտք
դնելը «չըլլար մեր շահուն կը
դպչի» անկարելի բացատրու-
թեամբ մը:

Սակայն Ժողովուրդի անբաժա-
րելի իրաւունքն է անոր երեսին
պռուղ ձանձցիւր աւտիճանը, ա-
պա քե ոչ մեքք քեզ կը ձանձ-
ցնենք:

Գոռապէք

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԵՆ (*)

ԱՏԱՆԱ, 6/19 փետրուար 1901

Մեր նախորդ նամակով յիշած
բժիշկը մինչեւ ցարգ բանտար-
կուած է:

Մեր անտանելի վիճակը, ինչ-
պէս զրամ էինք, նոյն կերպով կը
շարունակուի:

(*) Թարգմանաբար կարտասպնեմ Բո-
կոմենիայի վերջին քիսկն:

Մ. Խմբ.

Քաղաքս ուշադրութեան արժա-
նի երկու այցելուներ ունեցաւ,
երկու զինուորական և քաղաքա-
կան պաշտօնեաներ, որոնք այցե-
լեցին Սիւ, Հաճըն և շրջակայքը.
կառավարութիւնը այս այցելու-
թիւնները կը վերագրէ երկրագոր-
ծական քննութեան մը, բայց
մենք քանի մը որոշ ապացոյցնե-
րով գիտենք, թէ այս պատրուա-
կին տակ այցելուները պաշտօն-
ունին գաղտնի նպատակներու հա-
մար գանազան հրահանգներ տա-
լու: Մեր քաղաքի քահանան այդ
այցելութեան միջոցին Տարած կը
գտնուէր. կառավարութիւնը, հե-
ռագրի մը հետեւանօք, զանի հոս
բերել տուաւ. կիրակի օր, եկե-
ղեցւոյն մէջ, կառավարութեան
հրամանները ծանոյց հետեւեալ
կերպով. «Ամեն առթի մէջ պար-
տիք կառավարութեան հնազան-
դիւ, պարտիք մատնել զրգոյնն
ըր, կարեւորութիւն պէտք չէ ըն-
ծայէք խռովարարներուն, որոնք
գրսէն կուգան, անոնց մասին կա-
ռավարութեան իմաց տալու էք»
եւայն: Մարաշէ և Չէյթունէ ե-
կողներէ, կ'իմանանք թէ, այս առ-
սակ ծանուցումներ այդ տեղերու
եկեղեցիներու մէջ ալ եղեր են:

Հաճընի մէջ բանտարկուած ե-
րիտասարդները տակաւին բանտն
են, և խեղճերը վայրագ ու ան-
տանելի տանջանքի տակ կը հե-
ծեն առանց օգնութեան յոյս
մը ունենալու: Չօգ Մարգարանի
բնակիչները ձեռնարկած էին
վարժարանի մը շինութեան. կա-
ռավարութիւնը անոնց 12 երեւե-
լինքը Բայրասի մէջ բանտարկեց,
3 օր յետոյ, 11ր ազատ ձգուե-
ցան. իսկ միւս մէկը՝ որ տեղւոյն
հարկահաւաքին եղբայրն է, բան-
տարկուած կը մնայ, վարժարանը
կառուցանելու գաղափարը յղացած
ըլլալուն համար. Գեռ նա բան-
տին մէջ է, շինութիւնը անկա-
տար ձգուած է, աղաքը կը հա-
ւաքուին այն տեսակ տան մը մէջ
որ ախոռի տեղ ալ չի կրնար գոր-
ծածուիլ:

Հալէպի կուսակալ Բնիս փաշա-
յի կ'իլիկիոյ մէջ կառուած մը
պատրաստելու նպատակը օրըստօ-
րէ կ'իրականանայ: Մարաշի մէջ
հարստահարութիւնը այն սուտի-
ճանի է որ բնակիչները, բողոքա-
կան և կաթողիկ հայեր, շուրջ
1200 մարդիկ, տառապանքէ ա-
զատելու պարագայ յայտը, տեղեկա

գիր մը ստորագրած ու զրկած են
Հալէպի հիւպատոսին Սլաւ եկեղե-
ցիին գիրկը նետուելու համար:

Բողոքական միաթոնէրներ և ու-
րիշ երեսելի հայեր յանգիմանած
են Ժողովուրդը այս անվայել ըն-
թացքին դէմ: Բնակիչները ա-
ռարչած են թէ մինչեւ հիմա ըն-
դունսյն եղած են իրենց Ամերի-
կայի և Անգլիոյ ըրած դիմումնե-
րը և վերջին անգամի համար ալ
կը դիմեն Սլաւ եկեղեցիին: Նոյն
իսկ մեր քաղաքին մէջ այս գա-
ղափարին կուսակիցներ կան: Կի-
մանանք թէ հարիւր հայեր տեղե-
կագիր մը ստորագրած ու զրկած
են Դաժասկոսի յոյն Պատրիար-
քին:

Չէյթունի համար կառավարու-
թեան կողմէ գաղտնի պատրաստու-
թիւններ տեսնուեցան. չի գիտ-
ցուիր թէ ինչ նպատակի համար
է:

Մեր տխուր կացութիւնը ողբա-
ցող ձայներ մերթ կը լսենք, մա-
նաւանդ Բոք Արմենիան՝ որ այդ
ձայներու արձագանքը կ'ըլլայ, ի
բոլոր սրտէ մեր շնորհակալութիւ-
նը կը յայտնենք. բայց աւաղ,
մեզ համար այս ցնորք է միայն
ցորչափ Եւրոպական քաղաքագէտ-
ներ և վիճապետներ մեր նուիրա-
կան խնդրոյն հանդէպ բոլորովին
անտարբեր կը գտնուին: Հայ ազ-
գը որ պատմութեան հեռաւոր անց-
եալին մէջ փայլուն և երջանիկ
եղած է, իր գոյութեան իրաւուն-
քը կորսնցնելու վտանքին մէջ կը
գտնուի: Եւրոպան չի՞ գիտեր ու-
րիշն գոյութիւնը հայ ազգին որ
թշուառութեան ահաւելի ճիւղանե-
րուն տակ կը տառապի. այս ազ-
գը, որուն փայլուն անցեալը այն-
չափ լայն տեղ մը կը բռնէ մարդ-
կութեան պատմութեան մէջ, ին-
քըն է որ տարածած է, առաջին
անգամ քրիստոնէութեան լոյսը
Ասիայի մէջ:

Եւրոպան մոռցաւ այս ազգը որ
այդ լոյսը պահպանելու համար,
կենաց և մահու կռիւ մը մղած է
երկար տարիներ ու դարեր, կռիւ
խուարի դէմ, տգիտութեան դէմ,
և բարբարոս Ժողովուրդներու դէմ:
Այսօր իւր դժբաղդ անկուսիւն

Այլ իրեն օգնութեան կը կոչէ, ինչպէ՛ս համար իր ձայնը չի լսուիր։ Անգիտօք չի բաւեր այն սուրբեցողիչ տեսարանը, ոչ ուն, մինչև այսօր, Եւրոպան անտեսուած վրկան հղաւ։ տեսարան այնչափ տրիւր ու այնչափ նոցկալի, և որուն մասին մարդ չէ կրցած երբեք գաղափար մը կազմել։ Եթէ Եւրոպա կը փափաքի ճանչնալ ամենատխուր և ամենամեծ գեթաղ դու թիւնները, իր աչքը թող գտնէ զէպի Մալաթիայի բանտերը, շրջակայ գիւղերը և ուրիշ հայաբնակ քաղաքները։ Նոյնիսկ վիքթորիա չի կոչի թշուառներուն մէջ չի պիտի գտնէ այնչափ տխուր տեսարան մը։ Կը տեսնուին սղաւտ հայեր որք մեծածաւան ցուրտէն և անթոթ թիւնէ կը տառապին բանտարկուած ծանր տուրքերու պատճառով։ Մուլ թանը, բարեկամ մարդասէր Եւրոպային, և աշակերտները կարծիր գաղանին չեն բաւականանար ամենափար գնով ծախելու սեփականութիւնը, անկողինները և կահկարասիները խեղճ հայերուն, զորս բանտերը կը լեցնեն ոչխարի հօտերու նման, բոպիկ ոտքերով պող և խոնաւ քարերուն վրայ, մերկ և նոթի։ այս թշուառներէն ումաց գիւղները միայն դուրս կը նետուին

Այս մասը, որուն միայն բառը փափկակեցնելու ստորոտ կազդէ հայ ազգին սիրելի խեղճը հղած է։ նա արդէն կ'սպասէ իւր միութարութիւնը նախորդներէն աւելի սոսկալի կոտորածէ մը։ Ո՛հ, այլ ևս հայերը Անգլիոյ, Ռուսիոյ, Ֆրանսայի, Ամերիկայի, ևն. չէ որ կ'սպասեն սոսկալի տառապանքն։ րէ ազատելու համար այլ կոտորածի, մահուան է որ կ'սպասեն

Ձէ որ հոս վեպեր կը պատմենք ձեր սրտերը շալոթելու համար, այլ սա տխուր իրողութիւն է պատմուած տկանտես վիաններէ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Անր մասնաւոր քղաքական)

ՍՕՖԻՍ, 29 մարտ

Մակեդոնական Գոսիտէին անգամոց ձերբակալութեան խնդիրը Մակեդոնացի ժողովրդեան վրայ հեղհեղեղ ազդեց, կիրակէ օր ընկերութեան (1) սպասուորը ժողովրդական գումարման մը համար պատերու վրայ կարմիր թուղթէ յայտարարութիւններ փակցնելու գամ միջոցին, ոտտիկան մը արգի լեց առարկելով որ առանց մարդայի է և հետեւաբար հրաման չկայ սպասուորը պատասխանից վնջաբուած հանով մը, որ հանդիսատեսի մը սրունքը վիրաւորից ծանրապէս՝ որ փոխադրուեցաւ իսկոյն ի հիւանդանոց, և փախչիլ փորձեց, ոտտիկանը հալածեց զինքը յօգնութեան կանչելով և ուրիշ ոտտիկաններ, որոնք կայծա-

կի պէս հասան, բռնեցին սպասուորը և առաջին պահականցը տուրին։ արդէն յազեայ Մակեդոնացիներ ալ հետապնդելով անոր ազատ արձակումը պահանջեցին, հակառակ հաղաբաւոր ժողովրդեան միահամուռ, «անկցի կառավարութիւն, անկցին թրքական լրտեսներ» գոչին և ողապակին քանիններ ևս ձերբակալուեցան և ժողովրդեան յազում այնչափ ստատկացաւ, որ կրնար գէշ և շատ գէշ հետեւանք ունենալ։ բարեաղգարար ճիշդ այս պահուն Տօթթ. Սթոյլօ. ֆի թաղման թափօրը կանցնէր և ոտտիկանապետը որ թափօրին կը հետեւէր, նշմարելով տարօրինակ խուռն բաղմու թիւնը և Մակեդոնացուց յուզումը, յառաջացաւ և գրեթէ բան մը չը հարցուցած հրաւրուեց ազատ թողուլ բանտարկեալները, որով միայն կարելի եղաւ քիչ թէ շատ հանդարտեցնել ժողովուրդը և ցրուել ու ճամբայ տալ թաղման թափօրին գէպ յառաջ։

Սակայն երկուշաբթի նորէն բռնուեցան արձակուել և տակալին ալ գեղքի տակ են։

Նոյն օրը կէսօրին ժամանակ զօմիտէին անհեակները բացուեցան ի ներկայութեան ընդհ. գաւառաւորին, ստտիկանապետին, գոմիտէին նախագահ պ. Սարաֆօֆի և խուզարկութիւններ տեղի ունեցան, խուզարկութիւնք տեղի ունեցան և միւս ձերբակալեալներու բնակարանաց մէջ։

Որչափ կրցայ վերահասու լինել թղթերու մէջ ֆլասակար բան մը գտած չէն, միայն կնքած են սենեակ մը ուր գէնքեր կը պահուին եղբի, և Սարաֆօֆին ալ իւր տունը փոխադրած են, ուր կը սպասէ ոտտիկանաց հակադրութեան տակ, միւս ձերբակալեալք տակալին բանտըն են պահականոցներու մէջ։

Քանի որ ֆլասակար թուղթ մը գտնուած չէ, ինչու արդեօք տակալին այս բանտարկութիւնը։

Նոյն օր Մակեդոնացի պահեստի սպայ մը, որ նայակա Պուքրէշի ոճիրներուն հեղինակներէն կամ թերադրիչներէն մին կը կարծուի, ինքզինք անձամբ ոտտիկանութեան յանձնեց։ կը փոխուէին տակալին եւ ուրիշ վեց հոգի միեւնոյն կասկածաւոր, որով բոլորին թիւը 13 կըլլայ։

Այս երկուշաբթի տնակընկույններէն է և ոտտիկանապետին պաշտօնակալութիւնը, որ բոլոր քաղաքացիին զարմանք պատճառած է և ցաւ։

Ինչու արդեօք այս զրկում. ա նոր համար որ Մակեդոնացի է, երեկի ձերբակալեալները արձակել տուաւ, թող շարժած կըլլաւ։

Ինչ ալ ըլլայ այս պաշտօնակալութեան պատճառը պ. Պասու ճիւղի իրեն հետ կը տանի ժողովրդեան ամեն դասակարգի հասկցողներու համակրութիւն։

Այս երկուշաբթի նկատմամբ ընդհանուր կարծիքն այն է, որ գործը Պուքրէշի ոճիրներուն հետ կապակցութիւն ունի, սակայն նախորդիւս ալ ըսած եմ արտաքին ուրիշ մատ ալ կայ գործին մէջ և ի վերջոյ քաղաք մասնաւոր տեղեկութիւններու նայելով անձնական գնում կիրքեր ալ մեծ դեր կը խաղան գործին մէջ։

Եւ զարմանալի չէ՞ արդեօք, որ այնուհետեւ չորս փառաշաղկապակաւ երկար օրեր անցուցինք և Սպարսնիէին մէջ հարցապնդում մ'անգամ տեղի չունեցաւ այս մասին, մինչդեռ շատ շատ ոչինչ բաներու համար հարցումներ տեղի կունենան։

Ինչ կը նշանակէ արդեօք այսչափ լուսթիւն, անտարբերութիւն և պաշտութիւն խնդրոյ մը վերաբերութեամբ, որ իբր թէ պուլկարա կան պիտի ըլլայ։ Ազգային և հայրենասիրական։

Ուր պ. Ռիզով, որ օրեր յառաջ ուղիւն խաթիւ ժամեցով խօսեցաւ Մակեդոնիոյ վիճակին վրայ իբրեւ բուն Մակեդոնացի և վերջերս ալ իբր և առեւտրական գործակալու ի խօսիւպ, Արդարեւ հանկույտ մ'է այս, խաղ մը, որուն պատճառ ինչ ալ ըլլայ սակայն, գործին երևոյթը պատուաբեր չէ Պուլկարիոյ համար։ Թերեւս այսօր վաղը կամ մի քանի օրէն ողոստ արձակուին ձերբակալեալ այնպէս կամ երաշխուտութեան տակ, բայց տխուր տպաւորութիւն միշտ պիտի մնայ ի հեծուկս տեղնկրաք կառավարութեան մը։

Սօֆիա 5 Ապրիլ

Կը սպասուէր գոնէ Ջառկին, այս ուրախ աւուրց մէջ և պատճառ, որ բանտարկեալ Մակեդոնացիք երաշխաւորութեան ներքեւ ազատ կը թողուին, սակայն հակառակ այս ակնկալութեան զօմիտէին նախագահը, փոխ նախագահը և գանձապետը որ ցարգ երկրորդ պահականոցը վարդուած էին, երրորդ պահականոցը փոխադրուեցան և որ զարմանալին է, ալ ևս չեն թողուր ալ, որ ամեն մարդ ազատօրէն տեսնուի հետերին։ առանց հարցաքննիչ գաւառորին արտօնագրին կարելի չէ քովերին ելթալ և խօսակցիլ։ քրէն. նուրբալ ալ խաթիւ և պիւղութեամբ յառաջ կը տարուին։

Մասնաւոր տեղեկութեանց նախելով 13 մարդասպանութիւն կը վերագրուի այս մարդոց, որպէս թէ ցարգ 13 մարդ սպաննելու հրաման տուած ըլլան ի Պուլկարիւ, ի թիւրքիւ և ի Ռուսիոյ։ Թէ ինչ աստիճան ստոյգ են այս տեղեկութիւնք, չգիտեմ։ միայն յայտնի կ'երևի, որ կառավարութիւն ներքին և արտաքին ճշմանց տակ կ'ուզէ ճշել և այս խեղճերն, որ եթէ ըրած ալ են, ըրած են իրենց թշուառ հայրենիքի վերկութեան համար, ինչ որ ըրած են ուրիշ տղգաց յեղափոխականներ իրենց հայրենեաց ազատութեան համար։ և ճշմարտութեան համար ալ պէտք է խոստովանիլ որ գօմիտէն միշտ կը գործէր ու կընէր գիտութեամբ ումանց կառավարականաց։

Նոր ալ չեն այս իղածները։ 13 մարդասպանութիւնք տարիներու ընթացքի մէջ տեղի ունեցած են անտարակոյս, ուրիշն ինչու լուսթիւն ցարգ և այսօր այնչափ իրաբանցում։

Միւս կողմանէ Մակեդոնական ընկերութիւնք ալ անգործ չեն մնար յեղափոխական յայտարարութիւններ մէկգծելու հետեւ, միթիւններ շատ տեղեր, յորս կը բողբոքն

կառավարութեան ընթացքին դէմ կը բողբոքեն թիւրքին դէմ, կը բողբոքեն և անտարբեր Եւրոպայի դէմ։ Ջառկին երկրորդ օրը քաղաքիս մէջ օլ հոկայ միթիւն մը տեղի ունեցաւ, միեւնոյն նպատակ, միեւնոյն բողբոք, ամսոյս 4 ին ալ էտիրնէի վիճակին գաղթական յեղափոխական ընկերութեանց պատգամաւորներ ի ժողով գումաւրեցան ալ թէ ո՞վ կը լսէ այս կոչերու աղաղակներ, ո՞վ կարեւորութիւն կուտայ այս բողբոքներու և որո՞ւ հօգնէ։ պուլկար ժողովուրդու կառավարութիւն անգամ կարծես ուխտած կ'երեւին կարեւորութիւն շտալ այս խորտամեհութիւն և ոտտիկանք ու զինուոր կազմու պատրաստ հրամանի մը կը սպասեն յարձակելու և զարնելու համար, եթէ որեւէ ապօրէն ցոյց մը տեղի ունենայ։

Այսչափ անտարբերութիւն. Աստուած իմ

Քաղաքիս Ռուս հիւպատոսն ալ Տիար Պահմէթիւզ խաթիւ կը գատապարտէ գօմիտէին ոչ միայն շարժումներն ու գործերը, ալ և ազգային ձգտումներն ալ իտեալն ալ, ըսած է որ, Մակեդոնիոն միայն պուլկարին չվերաբերիր, Սերպը, Յոյնը և Ռուսներն ալ միեւնոյն իրաւունքն ունին անդ, և թէ չափազանցեալ են եղեր Մակեդոնիոյ վիճակին նկատմամբ զրուածները։

Միթիւն հայաստանի համար գրուածներն ալ չափազանցեալ են, որ քաղաքագէտներ ի գուլթ չարթեցան և չը կրցան թիւրքին ըսել «նաղ»։ բայց չէ այսպէս։

Այս խօսքեր լսողը կը զարմանայ թէ ինչու արդեօք ցարգ որ եւ գիտալութիւն մը չէր ըլլար գօմիտէին ընթացքին վրայ և այսօր ամեն կողմանէ հիւսիսէն ու հարաւէն, արեւելէն ու արեւմուտքէն միահաղոյն կը յարձակին խեղճ հայրենասէր Մակեդոնացիին վրայ և զանի խղճել կուզեն։ միթէ նոր է այս ընկերութիւն, միթէ չէին պիտի անոնք, որ Մակեդոնական ընկերութիւնք կան։

Ընկերային ապականեալ կենաց գաւառ մը, ուրկէ ինչիւ անկարելի է, և հանգոյց մը, զոր լուծելու համար կարծեմ շատեր պիտի լուծուին։

Կառավարութեան մէջ արդէն «խուճը» սկսած է։ Թէ և բուն պատճառ մակեդոնական խնդիրը չէ, բայց զլխաւոր պատճառներէն մէկն է, որ միանալով զինուորական պիւտճէի և ներքին պաշտօնէից անուանման խնդրոց, խախտած է այսօր այն համարայնութիւնը, որով Գարաբէլովիստներ-Ցանգովիստներ, կրկին կուտակցութիւնք, կը գործէին ու կը կառավարէին։

Գարաբէլովի Րաչօ փէթրովի օձիքէն բռնած է, Գանգովիստներն ալ Ոթայիովիստներուն հետեւն ինկած են։ Արդէն շարաթներ ա-

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

առջ Կրամ էի որ փափրիգով լաւագոյն պիտի համարի հրաժարիլ քան թէ սանթիմ մը զիջել զին աւարական պիտեմէն, կամ զլիւի վար պիտի բերէ նախարարութիւնը ինչպէս ցարդ ըրած է:

Կերեւայ թէ իշխանն ալ ուժ պիտի տայ զինուորական կուսակցութեան և ահա թերեւս նոր օր, նոր նախարարութիւն:

Թէ ո՞վ պիտի կազմէ նախարարութիւնը, ո՞ր կուսակցութիւնը պիտի մնայ, խնդիր է:

Ըստ ամենայն երևույթի ըստ փէթըրօյ ապարեզին տէրը պիտի լինի երբ և իցէ, զի թողունք իր շատ մը լաւ յատկութիւններն ու կառավարական ընդունակութիւններն, իշխանը որոշած կե. բեւի ժամանակէ մը ի վեր՝ ի դը լուիս գործոց տեսնել պահեստի բանակին բարձրագոյն սպաներ, զինուորական գրութիւն մը ինչպէս ի Ռուսիա:

Մօտ օրերս իշխանը կը սպասուի, երկուշաբթի ալ Սոպրանի էն պիտի վերաբացուի. ալ տեսնենք ինչ երևույթներու հանգիստ տես պիտի լինինք:

Մեր ազգային շիջանք մէջ ալ կապաստին նորութիւններ, արդէն զրոյս էմ օր Գեորգ վարդապետ տեղս է և շատ ալ կը փափաքէ հոս մնալ. ժողովուրդին խիստ մեծագոյն և կարեւոր մասը իրեն չհամակրելէ վատ և այս ի շնորհա իր մի քանի խեղճ ու կրակ իմաստակ բարեկամներուն կուսակցութեան գլխի է. խնդիրը արդէն Պոլսոյ կեդ. վարչութեան սեղանին վրայ կը գտնուի, ուր չափ կ'իմանամ, և եկող շաբթու որ այդ ժողովներն ալ կը վերաբացուին, կապաստի որոշում մ'ալ քաղաքիս գաղութին այս խնդրոյն համար:

Թէ ի՞նչ պիտի որոշէ վարչութիւնը չիմ ուզեր երթալ թիւն ներ ընել, միայն թէ գէշ չպիտի ըլլայ հիմէ մեր անգործ վեղարաւորներ վաճառքը զրկուէին, փոխքերը. . . որոյ իրենք ալ պիտի հանգստանան, ժողովուրդն ալ. զի ինչու են վաճառքը. ի՞նչ է ժողովուրդին յաշմար այդ «պօպօ. զակիր»ներու երեսն:

ՆԱԻԻՐԱՍՏՈՒՈՒԹԻՒՆ

Որբախնամիս Գործ. Ժողովը Զատկի առաւօտ ուղիով եկեղեցւոյ մէջ պնակ մ'ալ որբերու անուան շրջագայեցնել, հազիւ յաջողեցաւ, սակայն իր կամքէն բոլորովին անկատար արտաճառաւ, միայն եկեղեցւոյ շրջաքաղէն դուրս ան կիւն մը գտնել և հոն գետեղել զբաժնէ խնդրուած սեղանի մը վրայ ափսէ մը և այս ալ եկեղեցւոյ տարողութեան կէսէն վերջ. այսու հանգիստ Որբախնամիս խիստ ուրախ ու գոհ տպաւորութեան առկա մեկնեցաւ, տեսնելով ժողովուրդին զեպի իրեն եւ որբերու ունեցած այն համակրանքը, որուն շնորհիւ կարողացաւ 80 ֆր. 40 սանթիմի նշանակելի գումար մը հաւաքել:

Նոյնպէս Որբախնամիս մասնաւորապէս գնահատման և շնորհակալութեան արժանի արժանի կը գտնէ Քարաճաթի գիւղը բնակող բնիկ կիսաբացի Ե. Թ. անուամբ աղին երիտասարդի մը առարաքը որ Զատկի առթիւ Բնկերութեան Գործ. Ժողովոյ Տիար Առնապետի տունը որոնելով ինքնաբերաբար որբերու նուիրած է 6 ֆր.

Վերոգրեալներէ վատ Որբախնամիս շնորհակալութեամբ կը յիշատակէ մաքսատան հայ բնակիչներէն հաւաքաբար ընդունած 10 ֆր. 82 ու կէս սանթիմը, ինչպէս նաեւ Ա. Գ. ի մէկ ֆրանքը:

Կնիք Գործ. Ժողովոյ

Վերադարձեալ Հնչակեան կուսակցութեան ծանօթ գործիչներէն Տիար Ալիքսան Արզուման, իր հետ ունենալով Տ. Տ. Կ. Յ. փափաքեան և Գ. Պ. Չիլիճեան, Ամերիկայի հայաշատ քաղաքները կ'այցելէ տանախօսութիւններ ընելու, և ինչպէս կը տեղակայեալք Զայն Հայրենեացէ, ժողովուրդը հռանջ գալից սգեւորութեամբ կ'ընդունի զինք ու իւր ընկերները արօք հայատանի արդի տխուր վիճակը բացատրելով, մէն մի զգայուն հայուն հանգէպ հայրենիքի ունեցած վսեմ պարտականութիւնները կը յիշեցնեն:

Լօրէնսի մէջ հրապարակային ժողովի մը առթիւ 300 հայ հաւաքուած ըլլալով, հանգանակութեան ձերնառկած ու անմիջապէս 300 տարր հաւաքած են. Զայն Հայրենեացի թղթակիցը կ'ըսէ, «չակընկալուած յաջողութիւն մըն էր այս, որովհետեւ այս վերջի ամիս ներս արգէն ուրիշ հանգստակու. թիւններ ալ տեղի ունեցած էին քաղաքիս մէջ. — զեռ երկու շաբաթ տալէ ետք որ որբերու ի նպաստ կ'որդի գումար մը կը նուիրէր Լօրէնսին: Ու այս ամենէն վատ այս շաբաթ իրիկուն Դաշնակցութեան տեղւոյս կ'օժիտէին ալ հրապարակային ժողով մը սալքած էր յատկապէս Հնչակեաններու կողմէ առաջադրուած նպատակին արգեք հանգիստեալու գիտաւորութեամբ և բարձրակարգութեամբ լեւադրուեցաւ ներկայից (թուով 60) թէ՛ վաղը երբ Հնչակեաններուն կողմէ գումար մը լի տալք. բայց ժողովուրդը չզլացաւ տալ:» ևն.

«Կոնկալ»ի մէջ կը կարգանք հետեւեալը Նիւ Եօքէն գրուած: «Նոր գաղթականներ ամեն օր կը հասնին անօթի և թշուառ Հայ անգործներու ու կարտաներու թիւը այնքան կը շատնայ որ անոնց օր. նութիւն հասցնելը բաւական դժուարին գործ մը դարձած է. Գաղթա

կաններու թարեւորական ընկերութիւնը տակաւին չյաջողեցաւ իր գործակատարը, Պր. Պ. Ս. Յա. կորեան գաղթականութեան պաշտօնատան մէջ իրր Հայերու ներկայացուցիչ ճանչցունել, որպէսզի նոր հասած Հայերու անմիջական օգնութիւն մատակարարէ:»

— Բարիկ Հայկական եկեղեցիի շինութեան համար Դան զ'էրզէի կողմը 70,000 ֆր. արժողութեամբ յարմար գետին մը գնուեր է:

— Երուսաղէմ հանդիպումի տաւորներու թիւը մինչեւ մարտ 18 հազարի հասեր է և կ'սպասուի եղեր որ աւելի ստուարացած ըլլալ մինչեւ Զատիկ:

— Գեր. Նիսէս եպիսկ. Արսլանեան Ռոտտոթոյի առաջնորդ ընտրուած ըլլալով, «պէրաթ»ը բաւարարած ու մեկնած է իր նոր պաշտօնատեղին:

— Պէրպէրեան վարժարանի նախկին սաներէ ոմանք Պատրիարքի հետ խորհրդակցութիւն մը ունեցնելով վարժարանի հաստատման 25 ամեայ յորելեանին նախապատրաստութեան մասին, և մէկմէկ գումար ստորագրեր են. Պատրիարքն ալ 10 ոսկի գրուեր է:

— Զատկի առթիւ Սուլթանը իր անձնական գանձէն 250 ոսկի մեր Պատրիարքարանին և 100 ոսկի հայ պապականաց Պատրիարքին զրկած է ի նպաստ որբերու:

Նոյնպէս ըստ սովորականին 400 ոսկի հայոց և 250 ոսկի հայ Պապականաց Պատրիարքներուն յանձնուելու համար «Իրատէ» ըրած է:

— Ամեն լեզուէ լուրեր հաղորդող «Բարի Նովէ»ի գործակալութեան հիմնադիր տնօրէնը Տ. Ամէտէ Սէփ իր մահկանացուն կնքեց ապրիլ 2ին (Ն. Տ.) և յու.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՅՔԵՐ [62]

(ՊԱՏԿԵՐ ՄԸ ՏԱՃԿԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

Երևաղի վճիռակը, ամեն գնով կը ջանար այն բերաւոր անմեղ հայրենադուրեւ առիթի հետքը, անյայտութեան մէջ թաղել:

Այն տագնապայից օրերուն, կարմիր գայլէն Հասան Թահսին փաշային, բացարձակ հրաման տրուած էր, իր գիտցած եղանակով մէկ կողմէն զարհուրելի կերպով, հայերը տանջելու, կեղեքելու ու միւս կողմէն Սասունի սէդ սառնակէն որոտացող Հայկական անմեղ արիւնի արդար վրէժի ձայնը տեղին ի տեղ խեղդելու: Հասան Թահսին փաշայի կեանքի մէկ քանի սեւ գիծերը հոս ներկայացնելով կը կարծեմ որ, պզտիկ պաղափար մը պիտի կրնամ ստեղծ ըլլալ թիւրք կառավարիչներու վրայ ընդհանրապէս, ու Ապտիւլ Համիտի այն սիրական վալիի վրայ, մասնաւորապէս, զոր չորս մ.ժ պետութիւններու ղեկավարները, Տիպալուսիական այնքան երկար խաղերէ տք, հազիւ հազ յաջողեցան պաշտօնաւոր ընել տալ. թրքական մեղ կեանքի ու հարկման մեղրած վարք ու բարքի արժանի գաւազ, վաւաշտ, չալլ, դանդաղ ու անկարգադիր իսկական անգղ զիմազծով, մեծկակ գուժարներով պարտքի ներքեւ տարիներով տառապող, անպաշտօն ու անգործ իր աղաոտ կեանքը աս ու անբարոյական զազիր խորշերը, կամ պաշտականաց «խանիլէ օճախի»ներու մէջ տափակօրէն քարշ տուող

տարիքն 55 60 միջահասակ, «աւթուրքայ» կըրոր մօրու քով, ամենապէշ ազգեցութիւն քործող ոճրագործի անհամակրելի աչքերով, ինկած, փնայած թիւրք մըն էր, Սասունի սարսափելի կոտորածի հեղինակը:

Ու Երևաղի շնագայլը որ, իր հայաջինջ ծրագիրը գործադրելու համար, աս տեսակ սոված գայլերը միշտ կը փնտէր, իր մտերիմ պալատականներէն մէկուն միջոցաւ երբ կատարեալ տեղեկութիւն կ'առնէ անոր վրայ, անմիջապէս կը կարգէ զան Պիլիթիսին կուսակալ ու կը շարունակէ իր փառաշահական անյեղի շնորհներով խրախուսել ան արեւարբու ճիւղը իր քանդիչի ու հարստահարիչի սոսկալի գերի մէջը: Ու ամբարիշտ, Զէքէյ Զէքի փաշայի հետ Սասունը կոտորելէ ու քարուքանդ ընելէ ետք, իր գիշարելի արեւնախանձ աչքերը կը դարձնեն Տարօնոյ, Սորբուռնիւնաց, Մանազկերտի, Բզնուիւնաց ու ամբողջ Սալնոնոյի հայ բնակչութեանց վրայ, իր իշխանութեան ներքեւ եղող հայաշատ ամբողջ գաւառներու կառավարիչները յայտնի համարձակ կը հրահանգէ. «Ուղղակի կամ անուղղակի հայերը հարստահարելու, բռնաբարելու, խռտանգիլու ու անոնցմէ մեծկակ գումարներ տուագործ տանելով վերջին ծայր աղքատացնելու:» Ուղղակի Երևաղէն բղխած աս մոլեգին հրամանը, ան ներկայումս վալիի օրով ընդարձակ կերպով ի գործ կը դրուէ Տարուրեւանի բազմահայ նահանգի մէջ:

Այս անորակելի կուսակալը երեք-չորս տարի իր քէֆին ու պիղծ քանաճոյքին համաձայն կը կառավարէ Հայաստանի ատ ընդարձակ նահանգը: Ա.

սոր պաշտօնավարութեան ամենաախորհակարգը թիւնը Սասունի արիւնոտ պատմութեան ու Հայկական ցաւատանջ կեանքի 90-95 լեզեւային տարեգրութեանց մէջ, իր սիրտ արթող ու արցունք հոսեցող եղբերակական էջիւ, ամեն ժամ նակէ աւելի կակծեցուցիչ են:

1894ին աս գաղանաբար թուրք կուսակալը իր անպատմելի վայրագութիւնները մոլեգնաբար առաջ կը տանի: Սասունի ազատ լեռներու վրայ թափուած հազարաւոր անմեղ ու քաջ հայերու արիւնի հոտը, մինչեւ Երևաղի գաղաղող հանելով, կատաղեցուցնէ իր մարդակեր ըտրեանը: Հրէշաշին այն տակնուվրայութեան օրերուն, ինք, կտոր միւր Սուլթանը, իր գոթային մաքերու ու հայաջինջ ծրագրիւններու գործադրութեան համար փութալից, ալ ու ձախ անգոտնալի հրամաններ կուտար, հայերու ընտանջումը սխթեցնելով թափաբ փութացնելու համար:

Զիշդ ատ տագնապեցուցիչ օրերուն էր որ, Եւրոպական չորս մեծ պետութիւններու Պոլսոյ դեսպանները իրենց Հայաստանի ներկայացուցիչներու միջոցաւ քննութիւն մը կատարել տուին Սասունի լեզեւային վրայ: Ու աս ահա որ պետութիւններու անհղ քննութեան արդիւնքն եղաւ մայիս 11ի «Բէֆորմ»ներու պաշտօնական առաջարկն ու Սասունի զարհուրելի կոտորածի հեղինակ Հասան Թահսին փաշայի պաշտօնակալութիւնը:

Ղ. Պ. Նախարարեան

(Շարունակելի)

գորակաւորութիւնը կատարուիցու
արտակարգ շքով, ի ներկայութեան
նախարարներու, գեղապաններու,
հրապարակագիրներու եւայլն:

Հանգուցեալը կարեւոր հրապա-
րակագիր մը ու պատմաբան մը
ըլլալէ վատ, իր վերջին ձեռնար-
կով իմաստ, «Բարի Նուկէ» զոր
ծակալութիւնը հաստատելով, օգ-
տակար եղած է շատ մը ազգերու
ինչպէս նաեւ Հայոցս. որովհետեւ
ինք աշակցութեամբ Տ. Մէլիք
Գալիթ բէկի հայրերէն ճիշդ մը
ալ հաստատած էր «Բարի Նուկէ-
լ» զործակալութեան մէջ, որ ա-
մեն հայ թերթեր ստանալով, մեզ
նկատմամբ հրատարակուած կարե-
ւոր լուրերը անմիջապէս կը հա-
ղորդէր օտար թերթերու ու պաշ-
տօնատններու:

Նոյն գործակալութեան մէջ հան-
գուցեալին ամենէ հին աշխատակի-
ցը Տ. Գալիթ բէկ ըլլալով, սա-
տուաբար քան իր պաշտօնակից-
ները յուզարկաւորութեան միջո-
ցին:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼ ԻԹԻԳԻՅԷ



ԹԻՒՐԿԻԱ

Սթանպուլ յիւսիս քաղաքի Ս.
Գոնսթանթինի մէմուրիէթին
հիւանի իտարէ իտէմէտիկինտէն
տօլայը խոշնուտիյէթսիզիդ հու-
տուկ կէտիւ իտի: Սինօզըն վէ
մէճիսի մուխթէթէ անպարտէ
սէրիսի, պախուսուս սապը Բաթ-
րիք Եուսկիմ Սրբապարտ թա-
րափառարարը, Գոնսթանթինի
Պապը Ալիճէ ճէրէան իտէն մուս-
մէլաթտա մուվաֆաթիյէթսիզիկին
տէն տօլայը թէչէթի իթմէթտէ
իտիլէր:

Նիհայէթ Սինօզ վէ մէճիսի մուխ-
թէթի կէչէն հափթա սալը կիւն-
քի իճթիմալարընտա Բաթրիք Գո-
նսթանթինի իթթիֆա: իթմէսինի
թալէպ իթտիլէր: Բաթրիք իթթի-
ֆաթըն վէրմէք իթթմէտի: Պու-
նոն իւզէրիմէ մէճիս Բաթրիքին
մէմուրիյէթտէն թարտընը թահթը
գարարա ալտը վէ պու պապտէ
պիր մազպաթա Պապը Ալիյէ կէօն-
տէրտի: Պապը Ալի Մէզահիպ
միւտիտի Զիվէր պէյ վաթիթտը
իլէ Բաթրիքի մէճիս ազալարը
իլէ ուզալարընտա Եօլունը թուլթ-
ալ իտէտէ, ազալար եինէ Էթէ
րիյէթի արա իլէ Գոնսթանթինի
հէր հալտէ իթթիֆաթընը թալէպ
իթթիլէր: հիւքիմէթ տախի մէճ
լիսին գարարընը Բաթրիքէ թէթ-
հիմէ իշտէն չէթիլմէսինի թալթի-
յէ իթթի: Ֆազաթ Ս. Գոնսթան-
թին միւթապաթաթ իթթմէյալ,
մէճիս ազալարընտ, 8 մէտրապո-
լիտէրէ իթթիթի վէ թալթի իթ-
սէթի իւզէրիմէ մէճիս պէթէթար
չիթաթի իթթի վէ Ալիյէ նէզա
րէթինտէն Բաթրիքին թարտընա

միւթէտար Պուլսուլթու Մէզահիպ
միւտիտի Զիվէր պէյ վաթիթտը
իլէ Բաթրիքի մէճիս նէտէրիւպ-
րէսի սալթիթտէ օգոնտը: Պիլա
իւէրէ Բաթրիքի մէճիս իթթի
սի Պուլսուլթու մէտրապոլիտի Ս.
Նութանէլի Բաթրիք գալմազամը
նապլէ, զըրպ կիւն սօնրա տախի
եէնի Բաթրիք ինթիլապը իշիւն
լազըմ օլան թէտպիլէրէ պաշա-
մըլ տըր:

Ս. Գոնսթանթին Բաթրիքի մէճիս
տէն չէթիլալ, Ֆէնէրտէ պիր ազ-
րէպաթընը խանէսինտէ օրուրմազ
տա ըմըլ:

Եէնի Բաթրիք գալմազամը Ս.
Նութանէլի մէմուրիյէթի տէրհալ
թաթիթ օլընմըլ օլտալ, պէրաթի
թէչէթիւր Եւրոպա Սաթրապաթա
վէ Ալիյէ նէզարէթինէ կիթմիշ
տիր:

—Ինկիլիզ, Ֆրանսըզ, իտալիա
Աստուրիա էլիւրէրիին պաշ թէր
ճիմալարը վէ Աճէմ էլիսի Միրզա
Մահմուտ խան քէնտի սէր թէրճի
մանը Բաթրիքին խան իլէ պէրա-
պէր իալար կիւնի պիլիմ Պատ-
րիարքարան կիտուպ, Զոտիկի
թէպրիթ իթմիշէր: Քէզա Բուս,
Ֆրանսըզ, Ալման, Ուսման, Պէլ-
ճիզա վէ Եուսան էլիլէրի վէ սա-
լիլ զէվաթը քէրաթ եէվի մէզթի-
տէ քարտ վիզիթիլէրին Օրմանեան
Պատրիարքըն խանէսինտէ պրազ
մըլտըր:

—Տաթա Մահմուտ փաշանին
մախտուլարը Մըրըր խտիլի Ապ-
պա չիլիմ փաշանըն թալիզիլէրի
նէ տալանաթալալ, Էվրօթալա
կիթիթիլէրին պիր մուխպիր եազ
մըլ տըր:

Ֆազաթ «Աթան Պիլիպ»ըն
Սթանպուլտան ալտըր սօն թէլէկ
րաթ մէրգուսանըն էվրօթալա կիթ
մէլէրի: Սալթանին իտարէի հաղը
րէսինտէն խոշնուտ օլմայան Ու-
մանը թապալարըն գօմիթէլէ
րինտէն միւթէչէթիլ պիր մէճիսի
ուսուլի թէչէթիլ իթմէք մազսէտի
նէ մէպին օլտըլընը պիլտիրիթ:

—Էմէպի մէմալիթինէ գալմըլ
օլան Օսմանը իտապալարըն թիւր-
քիլալ թէլիլի օլընմաթը պապըն
տա, տէվլէթիլէր իլէ չարթիմաթ
լէր թանդիմ իթմէք իշիւն Պապը
Ալի միւրաճաթլար իթմէքտէ
իմիշ:

Թիւրք հիւքիմէթին պու-
թիւպիթի պաշընա Էրմէնիլէրէ
վէ կէնճ թիւրքիլէրէ մախտուս օլա-
ճալը անլաշըլըր: Ֆազաթ հիշ-
պիր տէվլէթ պու միւրաճաթլա-
էհէմիլիթ վէրմէք լանն իտէրիլ:
—Քոնստանդինոպոլիսում Բուս
կազէթաթ Մէարիթ նէզարէթի
նին Էմիլ իլէ պիլալիւտաթթ թա-
թիլ օլընտըլ Սթանպուլ կազէթա
լարը եալիթ:

—Ալմանիլը իւշ պինպաշըլար,
պիրի բիտաթ, պիրի թօթը, տի-
կէլի թապիլէթի օլարազ, թիւրք
օրտուլարընտ 3 սէնէ մէմուրիյէթ
տէ պուլընաճալար. պու պապտէ
մուզաթէլէնաթէլէր, իմզալանմըլ
տըր:

—Պաշտաթ, Պապա, խարբըր-
վէ Պալաթիտաթ գօնօրօսհանէլէր
թէլէսիս իտիլմէսինի Բուս տէվլէթի
գարարալաշըլմըլ:

—Վաշիկիլթը թիւրք սէֆարէ
թինին սէր քիաթիպի Ալֆրէտ պէյ
Տէլիլ Մէլլ կազէթաթընտ թիւրք
հիւքիմէթինէ միւզիլ պէնտէր
եազմըլ օլմաթընտա տօլայը Սթան-
պուլ իսթինաֆ մահքէմէսի մէրգու-
մը ճանի սըֆաթը իլէ մուհաթէմէ
իտէճէկինի պիլ պէյան, տէրտէսթ
օլընմաթըն էմը իթմիշ տիր:

Քէզա Գըպըրլաթ նէլը օլընտ
թիւրքէ Զէման կազէթաթընտ
պիր թազըմ պէնտէր եազմըլ օլան
Տէրվիլ բաշանն ճիւրալթ մահքէմէ
սինտէ մուհաթէմէ օլընաճաղընը
պէյանիլ, տէրտէսթ էմրի վէրիլ
միշ օլտըլը Սթանպուլ կազէթալա-
րը իլան իտէթ:

ՏԱԽԻԼԻՑԷ

Բուսին կազէթալարը շու կիւնիլ-
տէ պուլաթիա իլէ իսանը տօթա-
նէ գուլանաթա տըրլար, վէ Մա-
կիդոնիա գօմիթէլէինէ գարշը չիմ-
աթի հիւքիմէթինէ էլէ պալըր թէտ
պիրլէր թազալի իտիլար:

—Պու կիւնէ զաթար Սօֆիատա
տէրտէսթ օլընտ Մակիդոնիալար
մահպուս օլտալ, քիմէ իլէ կէօրիւշ-
մէլէ միւսաթաթ օլընմաթը: Պիր գաշ
ճիւրալթ մաթտէսինտէն տօլայը թան
գիթաթ իմր օլընտըր մուխպիրմիլ
պիլտիրիթ:

—Բուս կազէթալարը Պուլկար հիւ-
քիմէթինին Մակիդոնիա գօմիթէսի
նէ գարշը սօն թէտպիրլէրին թան-
սին իթմէթէ (գօլիլ) պէրապէր, Մա-
կիդոնիա իշիւն չօղաթն պէրու վաթ
օլընտն իսլանաթըն իմրաճըր թալ-
սին իտիլար:

—Պարիթիլ նաղըրը Մ. Տանէֆ
Սօֆիատաթ պէօթիւք տօլլէթիլէրին
գոնսթանպուլտան միւրաճաթլէ, Պէր-
լին անտանաթի անքիմաթընա, Մաթ-
թիմաթա իսլանաթը լազըմէնին իմ-
րաթը պապընտա տէվլէթիլէրին Սթան-
պուլ միւրաճաթ իլէ թէվաթիլ իթ-
մէլէրին Պուլկարի հիւքիմէթի
նաթընա թալէպ իտէճէկինի, վէ ըս-
թանպուլ Բուս էլիլի Մ. Զիւրիլի-
ֆին պու թալէպ գուլթիլ վէրէճէ-
կին Սօֆիատան ապիլ 14 թարիլի
պիր թէլէկրաֆ պիլտիրմիլ տիր:

—Մ. Կիւրիլ Միլլը Մաթիթ-
նիա գօմիթէսինէ բէիս թային օլըն-
մըլ տըր:

—Պուրէլ մահքէմէսինտէ իսթիմա
օլընտն չահիլտէլին թանիլ Էլ հըթիլ
Պուլկարիալ կէօնտէրիլալ, գօմի-
թէ ազալարըն մուհաթէմէսինտէն տօ-
լայը պուլկար մահքէմէսի հուզըրըն-
տա չահաթէթ իթմէլէրինին իլթիլա
սը Բուսանիալա թէթիթ օլընմըլ
տըր:

—Ֆիլիպտէն 3 սաթ իրազ պու-
լընտն Բոշթիլիտաթ էնալի սալը կիւ-
նիւ տէրալըր գըրուպ, ալտըլարը
Մանիլէր թիւթէք վի ֆիլէթիլէրէ
պիրպիրինէ գուրընա եազըրտըր,
էօլիւ վէ եարէլի 30 քիլիլէ պալիլ օլ-
տըրը Ֆիլիպտէն եազըմըլ տըր:

—Թ. Բազարճըրտա ախիլէն գու-
հուր իտէն հարիթտէ 23 տիւքեան
եանմըլ տըր:

ԹՐԱՆՍՎԱՆ

Թրանսվանիա Միւրիլիս տաղարըն
տա բէք զանի ալթըն մաթէն տաթար
լարը պուլընմըլ տըր:

—Պիր թէլէկրաֆ Պէրլէրին ժէն-
րալ Ֆէնիլտէն 500 ինկիլիք եէսիր
ալտըլարը պիլտիրմիլ տիր:

—Լ. Քիլիլէրին Բէթթօրիտաթ պիլ
տիրմիլինէ նազարէն, Պէրլէրտէն
16 քիլիլ վուրուլմուշ, 25 եէսիր ա-
լընմըլ վէ խայը մուհիմաթ ու հալ-
վանաթ զապիթ օլընմըլ, Քէզա Օրանթ
տա Պէրլէրտէն 10 քիլիլ վուրուլմուշ
վէ 15 քիլիլ եէսիր ալընմըլ:

ՍԵՐՊԻԱ

1900 սէնթեմբեր իմր օլընտն թան-
րիլի նիւֆիս իլէ Սեպիլտաթ էնալի-
նին մըրտարը 2,535,068 քիլիլ օլտը-
րը, եանի պէշ սէնէ գարֆընտա
181,286 քիլիլ արթալըր անլաշըլմըլ:
Պէրլաթաթ 70,000 նուֆուս մէվճուս
տըր:

—Սիպիլտաթ եէնի թանդիլ օլը-
նտն Գանուրը Էսաթի (Սանմաթաթըրու-
թիւն) էնալիլին պիր թազըմ հազալ-
րընը լաղլիլ, Գրալըն գուլթիլ ու
թէլէսիրինի արթըրմազաթ տիր:

ԲՈՒՍԻԱ

Բուսիտաթ Մէարիթ նաղըրընը զաթիլ
իտէն Բէթթօ Գաթթիլիլին Բէթթօ-
պուլիլ մահքէմէսինտէ 20 սէնէ հապաթ
մահքիլ օլտըլընը կազէթալար իազ-
մըլ տըր:

—Ջարա սուի գաթա իտիլտիլինէ
տալիլ չըրմըլ օլան հալաթիլ Բե-
թթապուլի կազէթալարը Էսաթալ
կէօթէրիլար:

«ԻՐԱՆԻՆԻՔ» ՊՍՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հետեւեալ բաժնէկիւնները ստացանք:
Գր. Բարթաթ Պուրկազ 6 ֆր.
Ան. Փափազ. Սիլիպէ 12 »
Յ. Փափազ. Ֆիլիպէ 5 »
Գաթ. Մանուկ. Շուլա 10 »
Վ. Պաշ. Գարնապաթ 12 »
Եղը. Սուլիլիլ. Զալար 6 »
Մ. Վանիլ Գէօտէնիլ—Տեարալը
ստացանք միայն ձեր հաշւոյն կրնանք
ստալարիլ:
[Տ. Պաղտաթաթ Բոլհանէսեան Վաթ-
նա. —Ձեր երկրորդ նամակը հրատա-
րակիլ ալտըրը կը նկատենք. զոր
կրնաք զայն ձեր ընդդիմաթիւնը զըր
կեւ եւ մէջէրիլ ժամադրութիւն ու-
րոշիլ:

—Վրիպակ. —Մեր նախորդ թիւով
հրատարակուած «Կեղծարարութեան»
շուրջը յօդուածին մէջ Վաթանի
Վանան Վարազ ըսուելու տեղ անու-
շաղրութեամբ ի սիւֆեան ըսուած էր:
Տ. Պէրիլ Լօլլէլ.—միշիւ եօրը...

ՏՕԲԹ. ՍԻՄՈՆ ԳՈՒԹՈՒՄՃԵԱՆ

Մանկարար, կնիստարար եւ մասնա-
գիտ միլիթիլի ինտելիգենտ

Որ բաւական ժամանակ ի վեր Բա-
րիլ կը գտնուէր, բոշկալան նորա-
նոր գարմանուսներու ուսումնասիրու-
թեան, եւ յիշեալ ճիւղերու մշակման
համար, այժմ վերադարձած ու Ֆիլի-
պէ հաստատուած է, մեծ պրոդուկտի
վրայ նամակատան ճիշդ գէմի փողո-
ցին մէջ:

Հիւանդ կընդունի ամեն օր ժամը
2—6 վերոյիշեալ գարմանատներ:
Հիւքաթթիլ օրերը միւրաճաթ ժամերուն
միայն կանայք ձրաբար կը գարմա-
նուին:

Отговорникъ Н. Драгулевъ
П. „Взаимность“, Варна.